աշխատանքի մեջ ոչ սակավաթիվ դեպքերում։ Մեր հավաքած տեղեկություններին նայելով՝ այս բանը տեղի էր ունենում գլխավորապես այն տնտեսությունների մեջ, որտեղ տղամարդը հեռացած էր լինում դրսի աշխատանքի[34] և տնտեսությունը վարելու դժվարության ամբողջ ծանրությունն ընկած էր եղել կնոջ վրա[35]։

Սակայն դեռևս կոլտնտեսության կազմակերպման առաջին տարիներում գյուղերում դեռ կարելի էր լսել ծերունիների բողոքը թե՝ առաջ նորապսակ կինն արևին չէր երևում, իսկ այժմ հարսանիքի մյուս օրն արդեն վազում է կոլխոզում աշխատելու։ Արծվանիկում պառավ կանայք ասում էին՝

«Առաջ արևի տակ աշխատելը մեր ի՞նչ գործն էր։ Մեր գործը տանն էր։ Առաջ յոթ տարի ջանել կնոջը դրսում ո՞վ էր տեսնում, իսկ այժմ հարքնը[36] պսակվում՝ մէկել օրը գնում է ծխախոտի վրա աշխատում»։

Շիկահողում կինը չէր հնձում, խուրձերը տուն չէր կրում, կալի համէլում էլ շատ քիչ էր մասնակցում։ Գլխավոր գործը տղամարդն էր անում։

«Կանայք միայն հաղնանում էին»։

Վերաբնակվածների մեջ կինը ավելի էր մասնակցում և՛ հնձին, և՛ կալսելուն։

Խորխնը՝ խուրձը կապում էին կէմավ՝ ցորենի ցողուններից կապով։ Տասը խորխնը՝ մեկ փանջակ կամ փէնջակ էր, դեղին ասում էին պորքակ։

Հնում արտից բերքը գյուղ են փոխադրել ձիով, ջորիով, էշով, մի մասն էլ շալակավ։ Եթե շատ հեռավոր անցյալում սովորական չէ եղել կանանց մասնակցությունն այս փոխադրությանը, ապա հեղափոխությունից դեռևս շատ առաջ ամեն հասակի կանայք, նույնիսկ մանկահասակները, մեծ աշխուժությամբ օգնել են այս աշխատանքներում, երբեմն այս փոխադրությունն ամբողջովին մենակ իրենք կատարելով։

Որոշ գյուղերում՝ օրինակ Բեխում, որտեղ մինչև հնձի վերջանալը չէին սկսում թակելը՝ կալսելը, այլ խուրձերը բերում դարսում էին կալի մոտ՝ տէփում։ Տէփը մի ընդարձակ, առջևից բաց էյվան է, որտեղից լավ եղանակներին տղամարդ և կին խուրձերը հանում էին դուրս, փռում կալում և սկսում էին կալսել։

Կալսելու աշխատանքները մեծ չափով ընկնում էին կանանց վրա։ Նրանք էին կալը մաքրում խոտից, ցրխավիլավ ավելում, ջրում։ Նրանք էին օգնում խուրձերը քանդելու, հասկերը փռելու, կամերը շրջելու։ Հաճախ կինն ինքն էր կանգնում կամերին կամ երեխաներին նստեցնում։ Նա օգնում էր կալը հավաքելու, համէլու՝ մաղելու, տփորէլու։ Առհասարակ հացահատիկը մաքրելու բոլոր աշխատանքների մեջ կինն էր կատարում գլխավոր դերը։

Զանգեզուրի կամնը[37] կրկնում է Հայաստանի այլ գավառներում և առ-

---

34 Բաքու, անդրկովկասյան երկրներ և այլ վայրեր։

35 Եթե այսպիսի հանգամանքներում զանգեզուրցի կինը չէր քաշվում գնալու պապենական սովորության դեմ, բնորոշ է մի այսպիսի դեպք։ Գորիս գյուղում մի կին՝ հարկադրված լինելով մենակ իր ուժերով հոգալու իր բազմանդամ և մանրահասակ ընտանիքի պետքերը՝ իր տանդուռն առջև դրել էր կոշկակարի սեղանն ու պատվերներ էր ընդունում կոշիկ կարելու և նորոգելու, և այդ աշխատանքից չէր քաշվում։

36 Նորահարսը։

37 Կալի գործիքները հայերը շինում էին Սիսիանի Ուզ գյուղում և Կապանի մի քանի գյուղերում, թրքերը՝ Մաղավուզում։